

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻ 18

1 ՄԱՅԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դրամ եւ գրիչ (խմբագրական) Տ Ա. — Սպանիական «Ռեմանեսցո»-ն. ԱՐՇԱԿ ԱԼՊԾԱՃԵԱՆ, Միսի կաթիլներ, ՉիճԹԷ-ՍԱՐԱՖ, — Նկար մը (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ, — Ռաքսա (Նորակէտ) ՄԱՔՍԻՄ ԿՈՐԲԻ, — Էսկալա (Արձակ Քերթուած) Վ. — Խմբագրական
ԿԱՍԻՆՈՅԵՐ, — Նորերու բաժինը (Ներկու ոտանաւոր), — Տխրունի:

ԲՈՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ ծաբարաբերի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՆԱՆԻՆ ղրԵ. եւ գաւառներուն համար յիսուն ղրԵ. կանխիկ վճարելի: Արեւադարձան 12 Ֆրանկ կամ Երուսալի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը չի կուտար: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդներ որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Զեմ-ԲԷ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضي اداره

ԹԲՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantino ple

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ ղրկագրութիւն ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամենէն պատուաւոր եւ ամենէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովաւորուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուրուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Մառտինիէ-Ռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Փրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէօլիք Երլարզ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆաի վաճառատուն մը, Դուկայ Սահաֆլար. թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնաբարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎՂԴՐԱԿԱՆ ԸՆԿ.

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆուսք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆուսք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն» ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գիւներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահարածիւններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասուցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրքը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լնայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Սուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպարտաման

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զրաւեան արաւոքման

Պալպալեան ամէն օր աղուայի աճին տեղով հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրրաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5, Գիշերուան օր եւ է ժամու կարելի է դիմել: Պալպալեան կ'եւ րաշխաւորէ իր լեցուցած ու չինած տեղաւորները: Տորեկները տեղայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կ'աճէն կ'ախալ է:

Աղօթներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԷՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԷՐ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէնա... սակ գոհարեղէններ ունեւ չալ՝ աժան ու ճաշակաւոր, Թէ՛ արեւելեան եւ Թէ՛ եւրոպական ճաշակոպատաստուած, ժամանցոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չարաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գրեւորներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մահաւանդ տղայ մը: Թէպէտեւ հարկ չխոսնուի, հիւանդին պէտք է տալ



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ և կը տեսնուի որ

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԳՐՈՒԹԻՈՒՆ

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ ամենամեծ դեղ է: Երեգական տակ ասոր հաւասար բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր բեղաբոյժները և բեղաբոյժները ինքնին:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան

(Գրասենեակ՝ Մահմուտ—Իսլամ, Թարազճրար, Մեծ Նար կանի կից, Թ. 37)

Այս հանրածառութիւնը գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բորդէ տմէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ եւ է որոտ կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով լլուսուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ յանձնարարութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղղուին գրասենեակը:

Իւրաքանչիւ պայմաններ:

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou

Ջիդերու, լեարդի եւ ստամոքի հիւանդութեանց մասնագէտ

Բարիդի հիւանդանոցներուն մէջ գործելու կան փորձեր կատարելով վերագրեալ հիւանդութեանց համար մասնագիտութիւն ձեռք բերած է: Իրեն դիմողները կը դարձանէ ամէն օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համամ հելլենական հիւպատոսարանին դէմ, թիւ 5 տունը, իսկ առտունները մինչեւ կէսօր Պօլիս կամօք ջին գլուխը Գոսթաքի Արսէնաքի թիւ 71 դեղարանը: Քիչ ատենի մէջ կը դարձանէ ջղային ախտութիւններ, լուսնոտութիւն, անդամալուծութիւն, գլխու ցաւ, սրտի բաբալուս, անքունութիւն, փրփրոտեան ախտ, յոդացաւ, օտամոքսի հիւանդութիւններ, դժուարաժառութիւն, արգանդի հիւանդութիւն եւ այլն: Դարմանման համար ներարկուածով ելեկտրականութիւն կը գործածէ: Ելեկտրական դարմանի համար մասնաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 18

1 ՄԱՅԻՍ 1904

ԴՐԱՍ ԵՒ ԳՐԻՉ



Մեր լրագրական հրապարակին վրայ նորանշան երեւոյթի մը հանդիսատես կըլլանք։ Այդ երեւոյթը առաջ բերողը անհատ մըն է, կամ աւելի յստակ խօսեցող համար՝ վաճառական մը, և առաջնակարգ վաճառական մը։

Գուշակեցիք թերեւս որ Յովհաննէս էֆ. Թավչանճեանին ակնաբկել կուզեմ։

Այս պատուական անձը, ընիկ Կ. Պոլսեցի, որ գորգի ընդարձակ առեւտուրով կը զբաղի Նիւ-Եօրքի մէջ, ուր բարեկեցիկ զիրք մը ունի, կ'ըսեն, հանրային համբաւ մը ու ծանօթ անուն մը վաստկեցաւ վերջին քանի մը տարիներու միջոցին, ո'չ միայն իր ինքնաբեր ու ինքնատիպ բարեգործութիւններովն ու նուիրատուութիւններովը, այլ քիչ մըն ալ իր գրեւոր հակումովը զոր ընդհանրապէս մեր հարուստները այնքան քիչ ունին, եթէ ո'չ ընաւ։

Բարոզի մըցումին Մեկենասը, Մայր եկեղեցիի չապիկներուն նորոգիչը, Հիւանդանոցին, Որբանոցին և Պատրիարքարանի կողմէ առաջարկուած զանազան պէտքերու կամ հաստատութեանց սատարող այս հեռաքնակ ազգայինը, որուն տեղ ուրիշ ո'ր և է մէկը պիտի շատանար իր մարդասիրական առատաձեւութիւններովը և խղճի կատարեալ հանդարտութեամբ իր գործին պիտի նայէր, — գրիչ շարժելու կըսկսի մեր մամուլին մէջ և կը դառնայ պարզ յօդուածագիր մը։

Իրաւ է թէ amateur գրողներ ունինք մէկէ աւելի, նիւթական անկախ կացութիւն մը վայելող, դիւքի ու անունի տէր, փաստաբան, բժիշկ և այլն. որոնք զուտ գրականութիւն, զուտ բանաստեղծութիւն, զուտ բանասիրութիւն կ'ընեն իրենց պարապոյ ժա-

մերուն մէջ։ Թավչանճեան էֆ.ն ասոնցմէ ո'չ մէկուն օրինակին կը հետեւի. ինքն ո'չ գրագէտ է, ո'չ քերթող, ո'չ բանասէր. վաճառական է, ու վաճառական կը մնայ իր պատուակալ աշխատակցութեամբն ալ՝ առեւտրական տեսութիւններ գրելով։ Մանգուսի մէջ։ Անկեղծապէս պէտք է խոստովանիլ որ, մեր առեւտրական ասպարէզին մէջ գտնուողները, է'ն ջոջերէն սկսած մինչև երկրորդականները, չէ թէ իրենց մասնագիտութեան վերաբերեալ յօդուած գրել, այլ անոր մասին խմբագիրներուն հետ բառ մը փոխանակելու իսկ չեն զիջանիր։ Եւ պատճառը շատ պարզ է. անոնցմէ մեծագոյն մասին քով գրելու կարողութիւնն է որ կը պակսի. իսկ եթէ այդ կարողութիւնը քիչ շատ ունեցողներ կան, անոնք ալ պզտիկութիւն կը սեպեն իրենք իրենց՝ գրող դասակարգը կազմող հասարակ մահկանացուներուն հետ խառնուելը։ Այն ատեն ո'ւր պիտի մնար «Աղնուաշուք»ին հմայքը։

Թավչանճեան էֆ.ն ոտնակոխ կ'ընէ այս նախապաշարումը և գեղեցիկ օրինակը կուտայ սա քաղաքակիրթ ու լուսաւորեալ գաղափարին, թէ Դրամը ու Գրիչը կրնան հաշտ ընթանալ ու մէկտեղ գործածուիլ, բաւական է որ ժողովրդական ձեւքի մը մէջ գտնուին։ Երկրորդ և աւելի՝ ցայտուն ու նորանշան երեւոյթը զոր կը պարզէ այս եռանդուն վաճառականը, իր երբեմնակի երեւումն է նամակաձև յօդուածներով որոնցմով կը փութայ պատասխանել, օրինակի համար, իր մէկ նուիրատուութեան ձեւին դէմ երեւցած քննադատութեան մը կամ իր համամտութիւնն յայտնել՝ հանրային բարեգործական

հարցի մը առթիւ ծագած վէճի մը մէջ այս կամ այն գրողին տեսութեանը ու կարծիքին, ինչպէս ըրաւ Արեւ. Մամուլի ու Արեւելի միջոցաւ յաջորդաբար:

Մեր մէջ, արմատացած ունակութիւն մը կը պահանջէր, մինչև ցարդ, որ լրագիրը, գրողը, հանրագումար պէտքի մը նպաստելու հարկը միայն զգացնէին հրապարակաւ. և վաճառականը, սեղանաւորը, հասարակը, տան կամ... մերժեն. առաջինին դերը անկէ անդին չէր անցներ, ու վերջիններն ալ ուրիշ բանի չէին զիջաներ, բայց եթէ՝ քննադատութեան մը պարագային՝ քէն ընել, ուստի որ ա'լ բարեգործութիւն չընեն, դպրոցի, գրականութեան, եկեղեցիի չի նպաստեն: Թաւջանճեան էֆ.ն ո'չ միայն քէն չըրաւ քարոզի մրցանակ մը հաստատելուն դէմ՝ գրուելուն առթիւ, այլ և՛ շարունակելով հանդերձ իր նպատակները ալ ու ձախ, —ինչպէս վերջին անգամ Հերթիկ Հոճային մահուան առթիւ Բիւզանդիոնի միջոցաւ Ուսուցչաց Օգնութեան Մատուցին նուէր մը զրկելը, —պաշտպանեց իր ըմբռնումը, իր զգացումը և իր մտածումը՝ Մեկենասութեան ու Բարեգործութեան մասին, շատ բարեկիրթ ու համեստ ոճով գրուած նամակով մը որ, —ըսեմ անցողաբար, — իրրեւ նմոյշ կրնար ծառայել մեր մէկ—երկու իրր թէ եւրոպական կրթութիւն առած հրապարակագիրներուն որոնք գրական ու լրագրական պարզ վէճ մը անձնական թշնամանքի կը յանգեցնեն:

Մեր բարձրատիճան եկեղեցականութիւնը՝ իր քարոզներուն մէջ, և մեր խորհող ու գրող դասակարգին խոհական ու փորձառու մասը սովորաբար սա theser կը պաշտպանեն, ամէն անգամ որ առիթը կը ներկայանայ, թէ պէտք չէ խօսքով կամ գրչով վըշտացնել մեր հարուստները որոնք կրնան ունենալ իրենց առանձնայատուկ հակումները, նոյն իսկ քմահաճոյքները՝ բարեգործելու մասին, բայց վերջապէս կը բարեգործեն: Անոնք են որ շինեցին և կը շինեն ու կը վերանորոգեն եկեղեցի, դպրոց, հիւանդանոց: Առանց հակառակելու այս տեսութեանը, որ նոյնքան բանաւոր է՝ որքան գործնական, Թաւջանճեան էֆ.ն իր Բարոյի Մրցանակին քննադատներուն պատասխանելու առթիւ՝ անուղղապէս ու փափկութեամբ զգաց-

նել կուգէր թէ, փոխադարձաբար, հարուստներն ալ պէտք չէ ծայր—աստիճան դիւրադգած ըլլան, օրինակ բերելով Նոր Աշխարհի միլիոնատէրները, և թէ Գրչին իրաւունքն ալ ճանչնալու է միշտ Դրամին քով:

Այս սկզբունքին պաշտպանութիւնը հարուստ վաճառականի մը կողմէ՝ նոյնքան համակրանքի ու շնորհաւորութեան արժանի է որքան իր բարեգործութեանց շարքը: Եւ այս սողներուն շարժառիթը, —հարկ է չեւտել, — ո'չ թէ երկրորդ պարագան է, որուն վրայ ծանրանալու պէտք չի թողուր Թաւջանճեան էֆ.ին համեստութիւնը, այլ առաջինը մանաւանդ:

S. Ա.

ՅԱՅՐ ՄԸ



Աղօտ մըթութեամբ յատակի վըրայ՝ Պուրակ մ'ըղգըլիսի կը փրուռի հանդարտ. Ամպերու խորքէն —հըսկայ աչք անթարթ— ձերմակ լուսնին լերկ գանկը կ'երեւայ:

Ու իր սատափի յորդ վառքերուն տակ Որոնք ծոյլ կ'իջնեն ծառերուն մէջէն, Երկու կին մուսայ, զոյգ մը հըրեշտակ Մարմանդին վըրայ կանգուն կը դիտեն:

Մատոնի խաղաղ դէմքեր երկուքն ալ, Անժահ քաղցրութեամբ լի նայուածքներով, Աչքեր ու մետաքս սև մազեր ծալ ծալ Շոյելով իրենց քըղանցքն՝ անխռով:

Եւ երկու խարտեալ մանուկներ սիրուն իրենց մօտ, որոնք, խինդով մ'աննըման կը ժըպտին, ծաղկած ոստեր ձեռքերուն Մէջ, Անմեղութեան խորհրդանշան:

Նըկարչութիւնն է այդ կիներէն մին —Երանգապնակն ու վըրձինն հմայիչ. Բերթութիւնն ալ միւսն —ոսկեթել մարմին Այդ պերճ քընարն որ կ'երգէ ամէն ինչ:

Դիւթութեան պահն է, ու ներյուզումի. Դիւերին մէջ ուր կը նիրհէ պուրակն, Այդ նըկարին դէմ՝ ինծի կը թըւի Թէ հոգին կուլայ երգ մը ցնորունակ...:

Մ. ՈՒՂՈՒՐԻՍԱՆ

ՍՊԱՆԻԱԿԱՆ

“ՌՕՍԱՆՍԵՌՕ”, Ն

Հռոմէական հին քաղաքակրթութեան ազդեցութեան ներքեւ գտնուող ցեղերը, այդ ազդեցութեան տկարանալէն ետքը՝ սկսան նոր խմորումով մը իրենց համար խակատիւ և առանձնայատուկ քաղաքակրթութեան մը ծնունդ տալ եւ իրենց դրական արտադրութեանց մասնաւոր նկարագիր մը, յատուկ դրոշմ մը տուին որ հիմը եղաւ Միջնադարեան գրականութեան :

Այդ ձգտումը կը գծէ առաջին քայլերը այսօրուան քաղաքակիրթ նոր ազդերու ինքնագիրտակցութեան որ զօրաւոր հակազդեցութեամբ մը ծնունդ տուաւ բոլորովին նոր արուեստներու և ըմբռնումներու փթթումին :

Միջին դարը՝ գրական-գեղեցկագիտական տեսակէտով յօդաւորեալ մէկ շարունակութիւնն է աւելի հին շրջանի մը և ուրիշ բան չէ եթէ ոչ Հռոմէական քաղաքակրթութեան արտաքին դիմակովը՝ հին սովորութեանց յաջորդականութիւն մը : Զուտ ժողովրդական գրականութիւն մը հետգհետէ կրցաւ ծնունդ առնել, հիմ ունենալով իրեն նոր կազմուելու վրայ եղող ժողովուրդներու աւելի կամ նուազ նախնական բարքերը :

Արդէն մինչեւ ժ. Բ. դար միայն ժողովրդական քնարերգութիւնը գոյութիւն ունի, թէև հարուստ՝ պարունակելով պարի երգեր, ողբականներ կամ եղերգներ (տէստան) որոնց մէջ կը պատմուէին լքուած աղջիկներու և պիտոյ կիներու արարքները և բռնի ամուսնութիւններու հետեւանքները, մէկ խօսքով՝ պղտիկ միջադէպներ որոնք ոչինչ ունին աչքառու իրենց մէջ :

Այս նախնական գործերուն հետ կամաց կամաց ծնունդ կ'առնեն երբեմն իրականութիւնէն կամ պատմութիւնէն՝ բայց յաճախ երեւակայութեամբ յորինուած դիւցազնակոն աւանդալէպեր, որոնք նախագուռը կը հանդիսանան ապագայ դիւցազնագութեան՝ որ միջնադարեան գրականութեան ամէնէն կա-

տարելութեան հասած ճիւղն է : Այդ աւանդալէպերը որոնք այնքան ժողովրդականացած ու տարածուած էին, յաճախ շարադրուած էին ժողովրդական արուեստագէտներէ, որոնք քուլպատու անուանուեցան հարաւային, քուլպեո՝ հիւսիսային և պաուս բրիտանական երկիրներու մէջ : Անոնք կը ձեւացնէին տեսակ մը արուեստագիտական աղնուապետութիւն որոնց շուրջը ծնունդ կ'առնէր նաև խումբ մը ստեղծելու արուեստագիտական կարողութենէ զուրկ արուեստագէտներու—չրջիկ բանաստեղծներ—որոնք թափառական առաջիններուն պէս և յաճախ նուագածու՝ բաւական ճարտարութեամբ կ'ածէին տաւիղ, քնար, փող, թմբակիկ, նոյնիսկ երբեմն վնակ (sistre) ու բամբուկ և ասոնցմով աւելի կենդանի և վառ կը պահէին թուրքատուներու երկերը : Երբեմն անոնք պարզ աճարարներ կամ վարժուած կենդանիներու ցուցադրիչներ էին որոնք այդ արհեստը ի գործ կը դնէին պղտիկ օբերաներ երգելով : Շրջուն բանաստեղծները ամբողջ Միջին դարու շրջանին ժողովրդային դրականութեան մը հիմերը դրին իրենց թափառական և աստանդական կեանքովը՝ աւանդական աշխարհին մէջ աւանդ աւան և դրդեակէ դրեակ շրջելով և քուլպեոներու կողմէն կազմուած բանաստեղծութիւններ երգելով : Իրենց երկրորդական դիրքը պատճառ եղաւ որ օր մը անոնք չիթթուին դատարկաշրջիկներու հետ, մինչ քուլպատուները քուլպեոները որոնք արուեստագէտներու աղնուապետական մասնաւոր դասակարգ մը կը կազմէին, նուագածուէ աւելի բան մըն էին՝ քանի որ իրենց երգած բանաստեղծութիւնները ինչպէս նաև եղանակները անձամբ կը յօրինէին : Այդ քերթուածները նախապէս պղտիկ հատուածներ էին, յետոյ եղան պղտիկ բանաստեղծութիւններ, ի վերջոյ յանգաւոր հատուածներ, որոնցմով կը յիշատակէին երեւելի գործերը քիչ չատ իրական հերոսներու : Այս բանաստեղծները, խիստ քիչ հոգածու պատմական ճշգրտութեան, կ'ամուսնացնէին իրենց հերոսները քմածին կերպով և կը ստեղծէին անստոյգ ազգաբա-

նութիւններ և դիւցազնական ընտանիքներ։ Գանի մը երեւելի անձնաւորութիւններ՝ ինչպէս Շառլըմաններ՝ առանցքներ եղան որոնց շուրջը խմբուեցան Chansons de geste-երը, այսինքն հաւաքածոները այն պղտիկ բոս նաստեղծութեանց որոնք կը վերաբերէին ենթադրուած ընտանիքի մը որ կը կրէր իրական կամ երեւակայական պետի մը անունը։

Որչափ ատեն որ ընթերցումը տարածուած չէր, այս բանաստեղծութեանց մէջ, արուեստը շատ նախնական և անկանոն ձեւ մը ունէր, վասն զի կարդալու յատկացուած չէին այլ երգուելու և մտիկ ըլլալու, հետեւաբար ճշգրիտ յանգը, գրաւոր ոտանաւորէն պահանջուած յանգը, իրական օգուտ մը չունէր։ Թերմանաձայնութեամբ (assonance) — այսինքն տողերուն վերջին բառերուն վերջին վանկերուն ձայնաւորներուն նմանութեամբը — դո՛հ կ'ըլլային առանց նկատողութեան առնելու բաղաձայնները։ Նոյն իսկ չէին որոշեր երկբարբառները պարզ ձայնաւորներէն, երբ անոնք ունէին մերձաւորապէս նոյն ձայնը։ Քիչ քիչ միայն հոգ տանիլ սկսան յանգին, մինչ երկար ատեն չափը մնաց անորոշ և անհաստատ, վասնզի անիկա բացարձակ կերպով ընթերցման հետ կապ ունէր։ Ձեւին աւելի խնամք տանող բանաստեղծները անոնք համարուած են՝ որոնք կրցած են յանգերուն տմէնէն հարուստները երեւան բերել և այս ճիւղին մէջ հարաւային երկիրներու բանաստեղծները՝ քուլպասուները, դերազանցեցին միւսները, վասն զի անոնք առաջուց կը գործածէին ձայնաւորներով հարուստ Հռոմէական գաւառաբարբառները։

Միջնադարեան այս բանաստեղծական արտադրութիւններուն մէջ՝ թէպէտեւ անկապակից և անարուեստ, քանի մը աչքառու գործեր երեւան կ'ելլէին, ինչպէս (este de Roland, Chanson de Roland, Ghanson de geste-երու հիմն ունին նաև բրիտանական Romance-ները և սպանիական Ramancero-ն որոնք ուրիշ բառով չեն զանազանուիր արդէն եթէ ոչ լոկ անունով։

* *

Արտաքուստ Սպանիոյ քուլպասուները,

հիւսիսային Փրանսայի քուլպեները, Սքանտինաւեան երկիրներու և հին գերմաններու սֆալսները (scalde) ունին միեւնոյն յատկանիշները և կենցաղը, բայց իրենց գործերը՝ տոհմային առանձնայատկութեանց յատուկ դրոշմովը իրարմէ կը զանազանուին։

Հակառակ այն ազդեցութեան զոր սպանիական ազգը կրած էր զանազան ժամանակամիջոցներու մէջ՝ Հռոմէականէն մինչև գերմանականը, Արաբականէն մինչև Հրէականը, չէ կորուսած իր իսկատպութիւնը զոր իր աշխարհագրական դիրքին կը պարտի։

Նոր բառին ժողովուրդներու մէջ Սպանիոյ ժողովրդական գրականութիւնը նոյնիսկ երկրին պատկերն է, դիւցազնական, կրօնամոլ, երազող և կնճռոտ Սպանիացին։ Սպանիական ոգին ինչպէս նաև լեզուն խառնուրդ մըն է, որ իր ծանրութիւնը Հռոմէականէն կ'առնէ, խորութիւնը, տեսլապաշտութիւնը, միադիքականութիւնը Գերմաններէն, և քմայքը, եռանդը, չ'այլը Արաբներէն, և վերջապէս բան մըն ալ Հրեաներէն որոնց ազդեցութիւնը մեծ եղած է ժամանակ մը Սպանիոյ մէջ։ Սակայն հակառակ կրած այս ներհակ ազդեցութիւններուն, Սպանիացին կրցած է ուժով իսկատպութիւն մը ունենալ այն հզօր ազդեցութեան պատհառաւ զոր երկրին աշխարհագրական դիրքը իրեն վրայ ունեցած է։ Հոն վայրենի վեհութեամբ մը կամ թափանցող շնորհով մը՝ բայց միշտ տաքօրինակ գեղեցիկութեամբ մը նկարուած է ընթութիւնը որ Եւրոպայէ տարբեր աշխարհի մը վերաբերիլ կը թուի. հոն մարդ կ'ըմբռնէ այն արհամարանքը զոր այդ ժողովուրդը ունեցած է ցած և գռեհիկ բառերու նկատմամբ և իր հանդարտ և զուռող յոխորտութիւնը ճակատադրին դէմ։

Այս առանձնայատուկ նկարագիրով թեթալղղիին մէջ՝ որ երկար ատեն Հռոմի քաղաքական ազդեցութեան ենթարկուած էր՝ ամէն հոսանք իր ազդեցութիւնը ունեցաւ, բայց ոչ մէկը կրցաւ իր նախնական դրոշմը պահել։ Սպանիան՝ ինչ որ առած էր ուրիշներէ խմորեց և իրեն սեպականեց։ Այնպէս որ երբ Սպանիա իրեն յատուկ գրականու-

թիւն մը մշակել սկսաւ, իր առաջին արտադրութիւնները եղան դիւցազնական քերթուածներ, կրօնական բանաստեղծութիւններ, այլաբանական պատկերներ որոնց կը յաջորդեն յետոյ կամաց կամաց սիրոյ երգեր, առակներ և երգիծական վէպիկներ:

Բանաստեղծութիւնը Սպանիոյ մէջ երկու գլխաւոր տարրերէ կը կազմուէ՝ դիւցազնական աւելնէ և կրօնական յափշտակութիւն: Առաջին նմոյշը որ կը մնայ սպանիական բանաստեղծութեան Սիսիմ քերթուածն է, որ ներշնչմամբ և ձեւով Ռուանի երգին չատ կը նմանի, անծանօթ հեղինակէ մը յօրինուած, ԺԱ. դարուն վերջերը և կը ներկայացնէ սպանիական ժողովուրդին ոգին: Այս քերթուածին առանձնայատուկ յիշատակարանը ներշնչաբանը եղաւ բովանդակ սպանիական ցեղին բանաստեղծութեան: Երգիչները անկէ քաղեցին իրենց գրուածները և Սիտի անունովը երգեցին բոլոր դիւցազնութիւնները և հերոսական երեւակայական պատկերները որոնք բուն իսկ Սպանիան կը սահմանէին: Եւ այս կցկտուր երգերը որոնք թափառական երգիչներու բերնով Սպանիայ մէջ տարածուեցան բուն քերթուածէն չատ աւելի ժողովրդականութիւն ստացան, վասն զի երգուելու համար յօրինուած էին: Մայրեր իրենց զաւակներուն կը սորվեցնէին զանոնք եւ զինուորներ իրենց արշաւանքներուն մէջ զանոնք միայն կ'երգէին, որովհետեւ անոնք ամէն բանէ աւելի կը մարմնաւորէին Սպանիան:

Նոյնիսկ Սպանիա, այս իսկատիպ երկիրը, կը յատկանշէ բոլորովին նոր արուեստով մը որ իրն է բացարձակապէս: «Ռոմանսէռօն» սպանիական գրականութեան առաջին առանձնայատուկ և իսկատիպ գործն է և միանգամայն պատկերը անանուն և թափառիկ բանաստեղծներու ձեռքով գծուած Սպանիային որ կը ներկայանայ ռօմաններու մէջ իր վեհ զգացումներով, իր կրակոտ ու գունագեղ բանաստեղծութեամբը:

Սպանիական Ռոմանսէռօն ներշնչուած զանազան աղբիւրներէ՝ Ստոուածաշունչէն, Դիցաբանութիւնէն, հին պատմութիւններէ,

ասպետական Միջին Դարէն, մանաւանդ տոնմային աւանդութիւններէ, կատարեալ զանազանութիւն մը առաջ բերած է զգացմանց ու ոճի և արտադրած՝ դիւցազնական, ողբերգական, պատմական, սիրային, և նոյնիսկ երգիծական գործերը: Սպանիացի բանաստեղծը կրօնական բանաստեղծութիւններով ցուացուցած է վանական—միսդիքական միջին դարը իր իտէալներովը, իր երկնաբաղձիկ ձգտումներովը և մոլեգին սիրովը առ Յիսուս և առ Աստուածածին:

Բայց այդ շրջանին մէջ՝ գրականութիւնը դեռ իր մանկական քայլերուն մէջն է, որով երգիչը, շրջիկ բանաստեղծը, վսեմ ներշնչմամբ կ'արտադրէ թէև, բայց անհատականութիւնը՝ որ համայնքին անհատականութեան խառնուած է, հեղինակութեան երեւումը չի թոյլատրեր: Այնպէս որ ոչ ոք գիտէ թէ ո՞վ է ռոմանսներու հեղինակը: Սպանիա զանոնք իր մէջ ծնաւ և իրեն մէջ խմորեց: Երկար ժամանակ երգուելէ յետոյ միայն էսքոպար անուն մէկը կրցաւ անոնցմէ հօթմանստունը թըհատը հաւաքել իբր պատմութիւնը «քաջ ասպետին Սիտ Դամիէատորի»:

Միայն ԺԴ. դարուն՝ վերածնութիւնը Սպանիա կը մանէ, անուղղակի կերպով սպանիական գրականութիւնն ալ ենթարկելով հնութեան գործերուն, աղբուրով ժամանակակից գրականութիւններէն՝ ֆրանսականին և իտալականին աղբեցութեան, որոնք տարօրինակ խառնուրդ մը կը ստեղծէին խանդավառ լրջութեան և խեղկատակութեան, կրօնքի եւ անբարոյականութեան, որ ԺԴ. դարուն եւրոպական գրականութեան յատկանիշը դարձած էր: Յաջորդ դարուն Սպանիա ամէն ժամանակէ աւելի արտաքին աղբեցութիւններու կ'ենթարկուի: Բանաստեղծները կը նմանին Ֆրանսայի թռուպատուներուն եւ անոնց արուեստական բռնադժբօսիկ չինձու ճարտարութիւնները ի գործ կը դնեն որ ճաշակը կը խանգարէ և ամբողջ բանաստեղծութիւնը կը կ'սուրէ:

Իտալական աղբեցութիւնը ա'լ աւելի մեծ է. քանի մը բանաստեղծներ իրենց գոր-

ծերուն մէջ՝ Տանդէի նմանութիւններ կը մտցնեն, թէև շատ անտեղի և անյարմար կերպով: Իտալական աղդեցութեամբ, հին, լատին և յոյն հեղինակներու ուսումնասիրութեան սովորութիւնն Սպանիա ալ կը հաստատուի և հիներու թարգմանութիւնները և նմանողութիւնները կը սկսին շատնալ առանց կարենալու մեծ ներգործութիւն մը ընել Սպանիական գրականութեան վրայ որ պահ մը իր իսկատիպ գոյնը կը կորսնցնէ, բայց արտաքին աղդեցութիւնները կը ճոխացնեն զինքը և կը կազմակերպեն իր Ոսկեդարը՝ անոր գեղեցիկ ընդարձակութիւն մը տալու համար:

Իտալական գրականութեան գերագահութիւնը կը շարունակէ իր աղդեցութեանը ենթարկել Ֆրանսան և առաջնորդը հանդիսանալ Սպանիոյ: Սպանիա իտալական համալսարաններէն կը քաղէ իր առաջին ծանօթութիւնները գիտութեան, դպրութեան և Աստուածաբանութեան: Երկու աղգերու վաճառականական յարաբերութիւններն ալ միացած այն աղդեցութեան զոր Սպանիացիք կրեցին Իտալիոյ վրայ իրենց ըրած արշաւանքներով, թելադիր եղան որ սպանիական միջնադարեան բանաստեղծութիւնը՝ դիւցազնական Ռամանսէօն և հովուերգական ժողովրդային երգը որ Թրուպասոններու ձեռքով զարգացած էր կատարելագործուի Ժ. Դարուն մէջ, թէ՛ հնութեան և թէ՛ իտալական կաղապարներով արուեստագիտական քերթողութեամբ մը:

Բայց այդ նմանութիւնները բուն սպանիական արուեստը պատրաստեցին՝ որ կրօնական զգացման և մտածման ներքեւ գրեթէ իսկատիպ դարձաւ:

Սպանիա իր կլիմայով և աշխարհագրական դիրքովը և ցեղը թերեւս իր մասնաւոր հակումովը Եւրոպական ցեղերու մէջ ամէնէն կրօնապաշտը և ամէնէն մոլեռանդը եղած է: Կրօնքը սպանիական ցեղին մէջ այնքան շատ տեղ գրաւած, այնքան ամրապինդ լամբ մը կազմուած է անոր մտքին մէջ որ երբ բոլոր Եւրոպա՝ իր կրօնական կարծիքներու մէջ հիմնական փոփոխութիւններ կը կրէր՝

Լուտէրի վերանորոգմամբ Սպանիոյ մէջ ընդհակառակը մոլեռանդութիւնը աւելի կը զարգանայ քան թէ կ'անհետանայ:

Այդ կրօնական զգացումն է որ կատաղի և աններող կիրք մը դառնալով հաւատաքննութեան ծնունդ կուտար և իր գերագոյն մաքրութեան ու ամէնէն վերացական ընդարձակութեան մէջ՝ Սպանիոյ գրականութեան աննման մէկ ճիւղը՝ կրօնական քնարերգութիւնը կը ստեղծէր: Այդ գրուածքներուն մէջ թէև իտալական արուեստին նմանութիւն մը կը տեսնուի, բայց կրօնական զգացման այն յատուկ ըմբռնումը զոր Սպանիացի գրողը ունի, անոնց ոգին կը զատէ ուրիշ որ և է գրականութենէ:

Այս սեռը սպանիական ժողովուրդին սիրելի ուրիշ երկու ճիւղերուն—վէպին և թատերգութեան հետ—գրաւեցին համայնքին միտքը, եւ վանեցին ռօմանսէօն որ երգուելու սահմանուած էր. ժողովուրդն հոն այլեւս չպիտի գտնէր նախկին հրապոյրը՝ զինքնեցումը այդ երգուելու սահմանուած դիւցազններգութեանց մէջ անկենդան և անիմաստ ամբողջութիւն մը միայն պիտի տեսնէր:

Ասոր համար Սպանիոյ մէջ դիւցազններգութիւնը չզարգացաւ՝ այլ իրական կեանքի ըմբռնումներէ ծագում առած վէպը և թատրոնը, որոնք աւելի՛ կը յարմարէին ժողովուրդին ըմբռնումներուն քան այն կատաղի վայրենութեան և բարոյական կոպտութեան բարքերու պատկեր ռօմանսէօնները որոնց մէջ անհատական խորխորութեան զգացումը և անձնական փառքի սէրը կը ցոլանայ, ցոյց տալով այնքան խիստ՝ որքան վայրենի այդ ցեղին հոգեբանութիւնը:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՆԻՆ

ՍՏԱՅԱՆՔ Տօքթ. Ն. Տաղաւարեան էֆ. Մանգաբանսքիւն ծանօթ գործին օսմաներէն թարգմանութիւնը զոր կատարած է Տօքթ. Յովս. էֆ. Ոսկեան: Խնամոտ աշխատութեամբ եւ մաքուր տպագրութեամբ հատոր մըն է Միքայիլօսօփին որուն երեւումը գնահատական յօդուածներով ողջունեցին թուրքերէն ու հայերէն օրաթերթերը: Գին 10 զր:

ՄԻՏՔԵՐ ԿԱՅԵԼՆԵՐ



Առաջին սէրը, առաջին ակոյց հանելուն կը նմանի. ճակատագրային է, կանխահաս, ցաւագին ու կարճատեւ:

— Սիրելը մեղք մը չէ. հակառակ պարագային, բոլոր կիները անպարկեշտ պէտք էին նկատուիլ, ինչու որ ամէնէն հաստատակամ կնկան համար իսկ, կայ տկարութեան վայրկեան մը եւ անձ մը զոր չի կրնար չի սիրել և այդ անձը՝ իր էրիկը չէ խիստ շատ անգամ:

— Կատարելագործուելու փափաքող մէկը, թէ՛ միայնութեան պէտք ունի, ինքնազարգացումի համար և թէ՛ ամբոխին մէջ մտնելու է կեանքը բաղձալիմանի սերտել կարենալու համար:

— Վիճաբանութեան մը մէջ վերջին խօսքը զուրցողինը չէ միշտ իրաւունքը: Ընդհանրապէս մեր մէջ խեղաթիւրումը ու փաստակութիւնը (argutie), պատճառաբանութեան տեղ կ'անցնին (argumentation), և վերջին խօսողը յաղթած կը սեպուի: Առաջինը իմաստակ ու անվերջ նրբաքարչութիւն է քովեւի համբաներէ ընթացող, մինչդեռ երկրորդը, միանգամ ընդ միշտ և ուղղակի նպատակին կը դիմէ ու կը դարնէ:

— Առանց իր ըսածին հաւտալու, միմիայն աղէկ երեւալու կամ թերթ քշելու համար, ժողովուրդին քծնիլը, զայն շողոքոյթելը, երկու խօսքը մէյ մը Հայը ի բնէ ու չի գլտնուած պարկեշտ է, խելացի է, ջերմեռանդ է, ամօթխած է, առաքինի է ըսելը, աւելի ամօթալի է ու յնասաբեր՝ քան գեղեցիկ մարմին մը նկարագրելը, թաքուն մոլութիւն մը երեւան հանելը կամ վէներախտին վախը ներշնչելը:

— Քարոզը միսթիք գրականութիւն է այնչափ որչափ կարգ մը թերթօններ՝ վիպական գրականութիւն: Քարոզը յաճախ ուռուցիկ, պայմանագրական, phraséologique կրկնութիւններու շարք մըն է, մինչդեռ միսթիք կտոր մը՝ խոր համոզումի մը արդիւնք, գերազանցապէս հոգեբուղի է, իսկատիպ ու բանաստեղծական:

— Քննադատութիւններ կան շատ անգամ որոնց մէջ, ձգենք անձնականութիւնով տողորուած գծուած յարձակումները, պատճառաբանութիւնն ալ այնչափ խեղճ է, փոփոխութիւնն որ, արգահատանքը կը շարժէ: Եթէ նոյն իսկ մարդ զիջանէր պատասխանել, գէթ կորովի փաստեր խորտակած ըլլալու հաճոյքն ալ պիտի չունենար ինչ որ պզտիկ հաճոյք մը չէ և գերազանց ուժ մը ի վեր կը հանէ քու մէջդ:

— Քննադատութիւնը ամէնէն գիւրին բանն է երբ նախանձն է որ կը ներշնչէ զայն և ամէնէն դժուարը, երբ անկեղծ ու իրաւացի ըլլալ կողքէ մարդ, պատշաճութեան սահմանին մէջ մնալով հանդերձ: Այդ հաղուադիւտ պարագային, քննադատութիւնը գովասանքի մը համարժէք է և անկէ աւելի հաճոյք կը պատճառէ:

— Գրական յաջող արտադրութեան մը ու հետեւակ դրութեան մը մէջ կայ միշտ այն տարբերութիւնը որ կայ բուն աղամանդին ու Բայէ Ամէրիքէնի imitationներուն միջև: Առաջինը մշտակայ արժէք մը ունի, երկրորդը ծովը նետուած դրամ մըն է միայն: Յաւալի է որ առաջին ակնարկով շատեր չեն կրնար զանազանել իսկականը կեղծէն, բայց անդին կայ բարեբաղդաբար վորձադէտներու սահաւաթիւ բայց ընտրեալ դասակարգը՝ որ, — ժողովրդային բացատրութիւն մը գործածելով, — յօլ չուտեր:

— Աւելի նախամեծար է վրան-բաց գրողի անուն ունենալ քան թէ վարնոց գրողի: Արդէն անբարոյական դրողի ամբաստանութիւնը ամէն ատեն ու ամէն տեղ լաւ գրողներուն ընկերացած է:

— Երկու տեսակ գրութիւններ կան որոնք հաւասարապէս մերկասարանոց կրնան սեպուիլ: Անոնք՝ որ ըթացած ձերունինքնու դժուար գրգռականութիւնը խայթելու համար ստեղծուած են և անոնք՝ որ երիտասարդներու սիրային անսանձ խանդը չափաւորելու կը ծառայեն: Պէտք է զանազանել գիտնալ: Առաջինները կեղծուպատիր անուշութիւնները միայն կը ցուցադրեն վրադիրքով, երկրորդները, մանաւանդ անոր լեզի կող-

մերը ու հետեւանքները կը պարզեն մեր աչքին առջև: Անգամ մը, ֆրանսական հիւանդանոցները այցելած ատենս, ուսումնասիրութեան համար կը յիշեմ maternité մըն ալ գացած ըլլալ, ուր քսանամեայ հրաշագեղ fille — mèreի մը ծննդաբերութեան տագնապին ներկայ դտնուեցայ: Ոչինչ աւելի մերկապարանոց, կամ աւելի ճիշդ է ըսել, մերկամարմին էր: Եւ սակայն ոչինչ այնքան ուժեղ ու երկարատե կերպով պաղեցուցած է սեռային եռանդս: Անբարոյակա՞ն է աս: Եթէ այո՛, պարոն Թարթիւֆներուն ներողութիւնը կը խնդրեմ, այս ըսածիս համար:

— Մանաւանդ իր գրական նախասիրութիւններուն վրայ քիչ մը հաստատ ըլլալու է մարդ: Մէկէ աւելի volte — faceներ լաւ դադափար մը չեն տար մէկու մը նկարագիրի հաստատունութեանը վրայ:

— Շատ մը գրողներ կան որոնք յուսահատեցողիչ կերպով տափակ են ու նմանողակ: Անոնց՝ ամէնէն աւելի կեանքի ծանօթութիւնը ու իսկատիպութեան ջանքն է որ կը պակսին:

— Դրադէտը կատարելագործուելու համար այնչափ պէտք ունի ժամանակի ու դրամի, որչափ բժշկական կամ իրաւագիտական ուսանող մը: Անվերջ ընթերցումը, օտար գրականութիւններու յարատե ուսումնասիրութիւնները և նոյնիսկ faculté des lettresի մը հետեւումը անհրաժեշտ պէտքեր են որոնք նիւթական կարողութեան կը կարօտին:

— Ճամբորդութիւնը նորահաս գրագէտին համար այն է, իբր կեանքի փորձառական ու լայնանկատ ուսումնասիրութիւն, ինչ որ է հիւանդանոցի մը մէջ յաւելուածական կայքը, բժշկական ուսանողութեան չըջանը նոր աւարտած մէկու մը համար:

— Արուեստով խմբագրութիւնը ու գրականութիւնն ալ հիմա քահանայութեան պէս աժան ու դիւրին ասպարէզ մը եղած են մեր մէջ: Հոն կը դիմեն ամէն անոնք որոնք գրամագլուխ ու լաւագոյնին յոյսը չունին: Մինչդեռ պէտք էր ամէնէն աւելի vocationի ու դրամի տէր մարդիկը մտնային հոն:

— Ամէն ասպարէզ, քիչ չափ իր մեղրոտ

ու դառն կողմերը ունի, բայց Գեղարուեստները ամէնէն աւելի ունին իրենց լեզի ու անուշ կողմերը: Դէշը հոն է սակայն որ մեր մէջ, արուեստագէտները իրենց ասպարէզին լոկ լեզին կը ճաշակեն և մեղրին երազովը միայն կ'ապրին:

— Բազդաւորութիւն մըն է որ ամէն անգամ, թշնամական ոգիով տողորուած յողուած մը կարդալուս, անուշ ու բարերար քուն մը կը կոխէ վրաս: Ատիկա պատճառ կըլլայ որ պատասխան տալու փորձութենէն ու դժպատեհ հարկէն ազատ մնամ:

ՋԻՖԹԷ — ՍՍՐԱՅ.

ՏԽՐՈՒՆԻ

Վսեմ. Գրիգոր Խան և Տեարք Միհրան ու Տիրան Շամտանճեան դժբաղդութիւնը ունեցան կորսնցնելու իրենց երէց եղբայրը՝ կարապետ էֆ. ն՝ որ կարճատե հիւանդութենէ մը ետք իր մահկանացուն կնքեց երեքշաբթի օրը, իր բնակարանին մէջ՝ Գատըգիւղ: Հանգուցեալը, որ բաւական տարիներէ ի վեր գործէ քաշուած կ'ապրէր, անցեալին մէջ ունեցած է առեւտրական ժիր գործունէութիւն մը՝ մասնաւորապէս զբաղելով ֆէսի վաճառականութեամբ:

Յուդարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ չորեքշաբթի առաւօտ Գատըգիւղի եկեղեցին ուր համախմբուած էր ստուար բաղմութիւն մը յուդարկաւորներու որոնց մէջ մեծագոյն տեղը կը գրաւէին առեւտրական ու սեղանաւորական դասը, հայ ու եւրոպացի, և ուրիշ ականաւոր անձնաւորութիւններ, ինչպէս նաև պարսկական հիւպատոսարանի գլխաւոր պաշտօնատարներ և ընդհ. հիւպատոսը՝ չորս գաւառներով՝ ի պատիւ Գրիգոր Խանի որ, ինչպէս յայտնի է, իր առեւտրական գործառնութեանց հետ կը վարէ նաև նոյն դեսպանատան պատուակալ Թարգմանի պաշտօնը:

Արարողութեանց կը նախադասէր Բերայի քարաղիչ Տ. Հմայեակ եպիսկ. որ խօսեցաւ

նաև դամբանականը, յիշելով բարեմասնութիւնները հանգուցելոյն որուն հետ վաղեմի ծանօթութիւն ունէր, և անոր գործի ասպարէզէն մեկուսացմանը միջոցին իր եղբայրներուն ու մասնաւորապէս Գրիգոր Խանի ցոյց տուած հոգածութիւնն ու գուրգուրանքը: Եկեղեցական դասէն ներկայ էին նաև Տ. Գէորգ Երէցեան և Տ. Ներսէս Ասլանեան եպիսկոպոսները, հինգ վարդապետներ և բազմաթիւ քահանաներ:

Հանդիսաւոր թափօրով եկեղեցիէն դուրս հանուելով դադաղը, որուն ծոպերը բռնած էին Տեարք Տիգրան Թօքաթեան, Արշակ և Եղուարդ Գարակէօղեան, Մաքսուտ Հարենց, Պ. Լըպէ և Պ. Բրիսթիէն Շոր, առաջնորդուեցաւ նաւամատոյց, դպիրներու երգեցողութեամբ եւ պարսկ. դեսպանատան դավաններուն առաջնորդութեամբ: Հոն՝ յուղարկաւորները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Գրիգոր Խանի ու զաւկներուն՝ Հրանտ եւ Զարեհ էֆ. ներուն և Յեսու էֆ. Շամտանձեանի որոնք սգակիր հետեւած էին դադաղին,

Միջօրէին, հանգուցելոյն մարմինը Էտիրնէ—Գաբուի գերեզմանատունը փոխադրուելով, ամփոփուեցաւ Շամտանձեանց ընտանեկան դամբարանին մէջ, իր բարեյիշատակ ծնողաց քով:

Այս տխուր առթիւ, խմբագրութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը միացնէ վշտակցական այն արտայայտութեանց որոնք ամէն կողմէ ուղղուեցան հանգուցեալ Կարապետ էֆ. ի զաւկներուն՝ Օրիորդ Վերգինէ և Արաքսիի, Տ. և Տիկին Գրիգոր Խան Շամտանձեանի, Տ. և Տիկին Յեսու Շամտանձեանի, Տեարք Միհրան և Տիրան Շամտանձեանի, ինչպէս նաև Տեարք Հրանտ, Զարեհ և Նուպար Կ. Շամտանձեան Խանի:

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Յակոբ, Հրանտ և Լեոն Ասատուր էֆ. ներուն և Օր. Կալինիկ Ասատուրի՝ իրենց համեստափայլ մօր Տիկին Նփրոս Ասատուրի մահուան առթիւ: Անոնք որ մօտէն ճանչցած էին ողբացեալ Տիկինը՝

կրցած էին դադափար մը կաղմել անոր մայրական առաքինութիւններուն ու տանտիկնոջ ազնիւ ձիրքերուն վրայ որոնցմով յարգանք կ'ազդէր: Յուղարկաւորութեան տխուր հանդէսը, որ կատարուեցաւ շաբաթ առաւօտ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, համախմբած էր ստուար և ընտրեալ բաղմոսութիւն մը ամէն դասակարգերէ,—մասնաւորապէս Ուսումնական Խորհուրդը, գրագէտներ, լրագրապետներ և ծանօթ ուսուցիչներ որոնք եկած էին իրենց վշտակցութիւնը յայտնելու Հրանտ Ասատուր էֆ. ի համակրելի բանասէր—գրագէտին:

ԲՏԼՎԱՅՍ

(ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆ)

Անբժութեան խորհրդանշան չուշանը... ինչու սակայն. ի՞նչ անիրաւութիւն ատիկա քեզի հանդէպ, էտլվա՛յս, մաքունը ծաղիկ: Աշխարհի տգեղութիւններէն զգուած անբիծ հոգի մըն ես դուն, պացած Հէլլէտեան լեռներու անմատչելի բարձունքները ապաստանած, ճերմակներու մէջ ամբողջ: Ո՞ր ծաղիկը քարացած ճերմակ փրփուրէ հոգերու մէջ կը բուսնի, կը ծլի. ո՞ր ծաղիկը ամպերը կուսնայ իրեն խանձարուր. ո՞ր ծաղիկը կ'ապրի՝ առանց մարդոց արտաշնչած աղտոտ օդին պէտք ունենալու, բաց ի քնէ, էտլվա՛յս—Ալպեաններու մենասէր, չքնաղ պըշրուհի:

Ձիւնը, բոլոր միւս ծաղիկները սառեցնող անբիծ ձիւնը, կեանք կուտայ քեզի—անբիծ կեանք—և հոն երկնքի վճիտ կապոյտին այնքան մօտ, յաւիտենական սառոյցի դաշտերուն քով կ'ապրիս դուն:

Բնութեան օրէնքին դէմ նետուած հեղնութիւն մըն է կարծես քու կեանքդ հոն, սառոյցներուն վրայ:

Ո՛հ, կը սիրեմ քեզ, էտլվա՛յս:

Ապրած միջնորդաբիւ պէս մաքուր յուշեր կը դանեմ նուրր խաւերուդ մէջ. կեանքիս

երջանկութիւնը կաղմող բաղձանքներ կը տեսնեմ թերթիկներուդ մէջ: Քու օրրանիդ, ձիւնի միապաղաղ ու անկոխ դաշտերուն պէս ճերմակ ու շքեղ երազներ կը կարգամ վրայդ՝ երազներ որոնք կը շողան հեռուէն ու կը շլացնեն զիս — ինչպէս արեւին ճաճանչները — ու փալիլուն ծննդավայրիդ վրայ իյնալնուն՝ անցորդին աչքերը կը խողտեցնեն:

Իմ տաճարիս սրբազան մասունքն ես հիմա, ծաղիկ, մասունքը՝ դոր խորհրդաւոր ստուերոտ պահարաններու մէջ՝ կը պահեմ գորովազին և երբ երկիւղած շրթունքներուս մօտեցնեմ, բոլոր էութիւնս կը սարսուռայ կոյս սարսուռներով:

Դուն ալ սարսուռացիր անշուշտ, ինծի գալու համար անցած ատենդ այն կոյս ձեռքէն որ քեզ նուիրագործեց, զգացիր անշուշտ թէ ան քնքուշ ձեռքը քեզմէ աւելի մաքուր էր. զգացիր անշուշտ նսեմութիւնդ անոր քով, դո՛ւն, էն գեղեցիկը, էն շքեղը ծաղիկներուն — դուն մաքուր ձիւնը մթնոլորտի դաւակ՝ մինչ ան հեղինակ:

Բուրումդ ի՞նչ արբշտող, ի՞նչ կենսամորոգ խոնկ — անով աւելցուն:

Կեանքիս ընկերը պիտի ըլլաս ալ, ինձմէ անբաժան:

Ի՛նչ, կը սիրեմ քեզ, էտլվայս:

Վ.

ՄՕՐԻՍ ԵՕՔԱՅ

Հռչակաւոր մաճառ վիպագիր Մօրիս Եօքայ դոր «Հունգարացւոց Ալեքսանտր Տիւման» կ'անուանէին, մեռաւ նախորդ շաբթուն, ութսունամեայ հասակին մէջ: Այս մահը ազգային սուգ մըն է Հունգարիոյ համար, որ իրմով կը կորսնցնէ հնաւուրց հերոս մը և մեծ գրագէտ մը որ հունգարական գրականութեան վերածնութեան մասնակից մեծ արուեստագէտներէն մէկն եղաւ և ազատեց մաճառ գրականութիւնը օտար աղդեցութիւններէ: Եօքայ միանգամայն լեզուի բարեփոխիչ մը եղաւ գրական վերջնական ձեւ մը տալով անոր և լսող մեծ ծառայու-

թիան մատուցանելով մայրենի կրթութեան զարգացման: Ասոր համար է մանաւանդ որ իր հայրենակիցները երախտապարտ են իրեն և իր անունը անհուն ժողովրդականութիւն ունի ամբողջ Հունգարիոյ մէջ: Եօքայ հիւնալի կերպով պատկերացուց հունգարական կեանքն իր վէպերուն մէջ, և սքանչելապէս ի վեր հանեց մաճառ ժողովրդական հոգին:

Եօքայ հետեւեալ տողերով պաշտպանած է ինքզինքը՝ իրեն դէմ եղած դիտողութեանց առթիւ. — «Ինծի համար կ'ըսեն թէ իբր վիպագիր իտէալիսդ եմ: Թէ և այս դիտողութիւնը նուաստացուցիչ հանգամանք չունի ինձ համար, բայց ես այդպէս չեմ մտածեր: Իրաւ է որ արտաքոյ կարգի պատկերներ, դիւբեր, անձնաւորութիւններ, բացառիկ կացութիւններ կը նկարագրեմ, բայց չի կրնար ըսուիլ թէ այս անձնաւորութիւններն ու պարագաները բոլորովին անկարելի հանգամանքներ կը ներկայացնեն: Ապրեցայ անոնց հետ ու անոնց մէջ և տեսայ որ չափազանցեալ քմահաճոյք երեւցածը, տեսնուած իրերու և ապրուած դէպքերու յիշատակն է միայն: Տառապալից կեանք մը վարեցի, ուր գոյութիւնս վտանգուեցաւ շատ հեղ: Ժամանակ եղաւ որ ամիսը 2 ֆիորինի փոխարէն հունգարերէնի դաս տուի պղտիկ Հրեաներու. բախտին ամէն հարուածներն զգացի վրաս, երբեմն արժանի ըլլալով նաև անոր շնորհներուն: Արքայական պատուանշտներու արժանացայ. փառքին ոսկի ճառագայթները շողացին զխոռս վրայ և միւս կողմէ վարկաբեկութեան թոյնը թափեցին ոմանք վրաս: Սիրուեցայ այնչափ, որչափ ո՛չ օք կրնայ ըլլալ գուցէ»:

Մօրիս Եօքայ ծնած էր 1825ին ի Քոմորն: Փաստաբանութիւնը, որուն սկսած էր նախապէս հետեւիլ, թողով՝ ինքզինքը գրականութեան տուաւ բոլորովին և իր առաջին քայլերն այնչափ յաջողութիւն գտան որ քաջալերուեցաւ այս նոր ապարէզին մէջ յարատեւելու: Ամուսնացաւ մաճառ մեծ դերասանուհի Ռօզա Լապօրֆալվին հետ: 1849ին էր որ սկսաւ լրջորէն զբաղիլ իր երկերուն պատրաստութեամբ և գրեց իր լաւագոյն

վէպերը որոնք հարազատ պատկերներ կը ներկայացնեն մաճառ կեանքէ՝ և դասական գործեր նկատուած են: Գրեց նաև բանաստեղծութիւններ եւ ոտանաւոր թատրերգութիւններ, բայց ոչ այնքան փայլուն յաջողութեամբ: Շատ մեծ արտադրող մը եղաւ եւ իր գլխաւոր գործերը 130է պակաս չեն. բաւական ժամանակ ալ զբաղեցաւ լրագրութեամբ, մանաւանդ 1858ին, Բեշթա երթալով: Շարժական զաւեշտաթերթ մը հիմնեց ու զայն վարեց մինչեւ 1881, ժողովրդական դերեր նկարագրելով հոն. հիմնեց նաև օրաթերթ մը: Հունգարիոյ մէջ խորհրդարանական դրութեան հաստատուելէն ի վեր Նոքայ երեսփոխան էր. 1897ին Աւագայ ժողովին անդամ եղաւ: Շատ մեծ պարագաներու մէջ միայն խօսք առաւ, բայց իր խօսած ճառերը միշտ մեծ խանդավառութիւն գտան ժողովականներուն մէջ:

Ասկէ հինգ տարի առաջ Նոքայ երկրորդ ամուսնութիւն մը կնքեց երիտասարդ դերասանուհիի մը Պելլա Կոոյի հետ, որ կրնար իր թոռնուհին համարուիլ. բայց Նոքայ բռնուն կերպով սիրահարուած էր անոր: Նոքայ մեկուսի կեանք մը կը վարէր Բեշթայի մէջ: Մեծ յարգ կը վայելէր՝ արքունիքին մէջ. Էլիզապէթ Կայսրուհին մանաւանդ շատ կը յարգէր զինքը, եւ հանգուցեալ Ռոտովֆ արհիդուքսին կինը, այժմ Լոննէյ կոմսուհի, պաշտպանեց զինքը երկրորդ ամուսնութեանը առնն:

Մաճառները կը պաշտէին զինքը եւ 1894ին կատարեցին իր գրական յօդուածներ, որուն առթիւ որոշուեցաւ իր բոլոր գործերուն չքեղ տպագրութիւնն ընել, եւ իրրեւ հեղինակութեան իրաւունք, կանխաւ իրեն բերին յանձնեցին 16500 օսկրի չէք մը:

ՆՈՐԵՐՈՒ ԲԱՃԱՒԸ

ՊՐԵՍԿԱՌԵՆՆԵՐԸ

Սոսերները կը բեւաժին կ'իջնեն վար Դեղնորակ. գործ ոյրսներով աւսափե. Թուխցած ծովուն եզերէն ի վեր յաճաքար, Լուսինն ալոս ցոյրն նուաղ կ'ըստէ:

Ծառերուն մութ տերեւներ՝ վայրահակ, Լիլակներ, հիրիկներն ալ ցաւ ու ցիր՝ Կը սարսուռ, կը դժգունին լուսինն ցակ... Լուռ խոհանգով կը մնամ հոս, մտացիր:

Իրիկուններ, հեւոտ պահերն սա կեանքին Ուր յամբօրէն, մեկիկ մեկիկ, անխնայ Կը փափուի փունջն անուշգեւոր սեղագին.

Եւ կը ննչեն, սրսիս վրայ, օրհ օր Թերթիկները այդ գունասած ալ հիմայ Կեանքին սրխուր եջերն փափուին մինչեւ որ:

ԷՏԼՎԱՍՏ

ՄՈՐԵՐԵՆ ՄԷՋ

(ՍԻՐԵՐԳ)

Ծաղիկները խաւարին մեջ կ'ոգեւարին լուռ անձկաւ, Արեւոյսի կեանքոս ցոյին, ջերմ ըղձանգով արեւին.

Շողը սարսուռ կուտայ անոնց կը դալկանան առ ցակաւ...

— Մութին մեջը չե՞ որ սակայն վարդի կոկոնը կը բացուի:

Գիտերին մեջ կը մարմնին խոյ յոյգերը ցերեկուան...

Կը թաղուին հոն, կանգնան խաւարին մեջ անվրդով...

Խոյ երազներ ոգի կառնեն խոկումներով վերանան...

— Այլ սոխակը միտս մութին մեջ սիրէ երգել հոգեթով.

Սարսուռները խաւարին մեջ մոլեգնաբար տնդոտին...

Պակերի մը դառն յիշումով, զարթնումովը տնդահար...

Հոգին տնջալ, խոկայ միտքը— վաս կիրքերուն միտք գերին...

— Մութին մեջ չե՞ որ օրհորդ, եղայ ձայնիդ սիրահար...

ՎԱՍՏԱՆ ՅՈՎԱՆՆԵՍՅԱՆ

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՌԱՏՏԱ

(ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷ ՍԻՐԱՅԻՆ ՎԻՊԱԿ ՄԸ)

ՀԵՂԻՆԱԿ ՄԱՔՍԻՍ ԿՈՐՔԻ

Բ.

Լօյքօ սկսաւ երգել .

«Կըրա՛կի պէս արչաւածոյր մեկնինք, հօ՛բ :
— Երկաթ ձեռքովս միայն նուաճուած սիրուն
ձիս — կը սուրայ դէպ դաշտագետինն քա-
ռատորդ — սուրայ՝, կ'այրի սիրտըս հեւքոտ,
սիրուն ձիս» :

Ռատտա դարձուց գլուխը ու ոտքի ել-
լելով ժպտեցաւ նուազածուին . Լօյքօ հրահ-
րուեցաւ արչալոյսի նման ու շարունակեց .

«Կրա՛կի պէս արչաւածոյր վաղենք հօ՛բ,
— օ՛ն սիրուն ձիս, փութա՛ փութա՛ դէպ
առաջ — դաշտ ընդ արծալի դուն սե շունչով
քառատորդ — ո՛վ գիշեր մութ, հողմասըլաց
ձիս յառաջ — սուրայ թըռչի, պատուէ ամպեր,
սե ամպեր — ու չի հըպիր իր բաշին — լուսին
պայծառ ոսկեհեր —» :

Իրաւ որ աղուոր է երգը . Հիմա ո՛վ
կրնայ երգել այսպէս, ո՞րուն բերանն ինկեր
է, բայց Ռատտա երգիծանքով մը ըսաւ .

— Այնքան բարձրէն մի՛ թռչիր, Լօյքօ,
կարելի է երեսի վրայ իյնաս ցեխին մէջ ու
լաւ մը աղտոտես պիտերդ :

Լօյքօ վայրագ ակնարկ մը նետեց անոր
ու չպատասխանեց :

«Հօ՛բ, հօ՛բ, կայծակս, երթանք արեւ կը
ծագի — երկուքնիս ալ, աւա՛ղ, այսպէ՛ս պիտի
պառկի՛նք — հօ՛բ, հօ՛բ, ահա արեւ ծագած
լուսարփի — ամօթահար և ակնկո՛ր, պիտի
հիւծի՛նք —» :

— Ահա սքանչելի կտոր մը, ըսաւ Տանիլա,
երբեք նմանը լսած չեմ :

Թո՛ղ ստանան մօրթէս ծխամորճ չինէ՛
եթէ սուտ կը խօսիմ : Ծերունին Նաուր կը
շարժէր պիտերը ու կը ցնցէր ուսերը հաճոյ-
քով : Այս յանդուգն երգը իրաւ կը հիացնէր
առէնքնիս : Ռատտա միայն կարեւորութիւն
չէր տար :

— Այսպէս կը բզզան ճանճերը, ջանալով
իրենց բզզիւնը նմանցնել արծիւի ձիչերուն,
ըսաւ Ռատտա :

Այս խօսքերը երբ կը լսէինք՝ քար կը
կտրէինք, կարծես ձիւն կը մաղուէր երեսինս :

— Կուղե՞ս խարաղանի հարուած մը,
Ռատտա՛, դոչեց անոր Տանիլա . բայց Սօպար
գլխարկը գետին նետեց ու ըսաւ : բոլորովին
դժգունած :

— Կեցի՛ր, Տանիլա՛, մի՛ սիրտդ հատցու-
ներ . ամենի ձիուն պողպատէ սանձ պէտք
է : Աղջիկդ ինծի կնութեան կուտա՛մ :

— Կուտամ յօժարակամ, խօսքս խօսք է,
ըսաւ Տանիլա ժպտելով, ա՛ռ զանի՛ եթէ
կուղես և եթէ կրնաս :

— Շատ լաւ, պատասխանեց Լօյքօ :

Ու դառնալով Ռատտայի .

— Ուրեմի՛, գեղեցիկս, քիչ մը մօտիկ ըրէ
ինծի ու այնքան մի՛ մեծամտիր : Ես շատ
աղջիկներ տեսայ աշխարհիս մէջ, բայց ա-
նոնցմէ ոչ մէկը սիրտս գրաւեց : Դուն, Ռատ-
տա՛, դուն հոգիս գերի ըրիր, ինչ ընեմ
ինչ որ գրուած է կուգայ մարդուն գլխուն
և... չկայ ձի մը որուն վրայ հեծած ատենդ
անմտրակ կարենաս վաղցնել զայն : Ես
քեզի կնութեան կուղեմ, Սասուճոյ առջև,
պատուոյս վրայ, քու հօրդ ու բոլոր այս
մարդոց առջև : Բայց կ'աղաչեմ մի՛ հակա-
ռակիր կամքիս, ես սանձարձակ մարդ մըն եմ
ու կ'ապրիմ ինչպէս որ կուղեմ :

Մօտեցաւ անոր, ակաճանքը սեղմած ու
աչքերը բոցավառ : Տեսանք անոր ձեռք եր-
կընցունելը :

— Ահաւասիկ, կը մտածէինք ինքնիրեն-
նիս, Ռատտա սանձ դրաւ դաշտագետին երի-
վարի մը վիղը : Տեսանք յանկարծ բազուկ-

ներուն վեր վերցունելը ու անմիջապէս կըռնակին վրայ տապալիլը, խնդհ տղան:

Տարօրինակ բան, կարծես գնդակ մը հասած էր երիտասարդին ճիշդ կուրծքին մէջտեղը: Ռատտան կաշիէ խարազան մը շաշեցուցած էր տղուն ոտքերուն ու զայն գետին տապալած:

Աղջիկը ընկողմանած՝ մնաց անշարժ ու լռիկ ժպտեցաւ: Լօյքօ, գետին նստած, գլուխը ձեռքերուն մէջ առաւ ու լաւ մը սեղմեց. կարծես թէ պիտի պայթէր: Բանի մը վայրկեանէն ոտքի ելաւ ու մեկնեցաւ դաշտագետինն հեռուները, առանց աչքը մեղի դարձնելու:

Նաուր նոյն պահուն ականջէս փոփսաց.
— Գնա՛ հսկէ վրան, չըլլայ թէ ինքզինքը բան մը ընէ:

Սահեցայ իսկոյն տեղէս, հետեւեցայ Սօպարին դաշտագետի մը մթութեան մէջ:

* *

Մաքար թոթուեց ծխամորճը ու նորէն լեցուց: Ես վերարկուիս փաթթուած և հողին վրայ պառկած կը դիտէի անոր հովէն ու տաքէն թխացած դէմքը: Տխուր կերպարանք մը առած էր, գլուխը կը տատանէր ու խօսքեր կը մրմարէ: Ճերմակ թաւ պելները կը ծփային ու հովը կը խաղար աղերէկ մազերուն հետ: Կայծակնահար հինաւուրց կաղնիի մը նման՝ բայց ոչ կորուսած իր կորովն ու ուժը հաստաբետ: Մովը կը շարունակէր շառաչել բաղխելով եղերքին ու հովը կը բերէր անոր մռնչիւնները մինչև դաշտագետին:

Նօնքս չէր երգեր ա՛լ, ու ամպերը հաւաքուած երկնից մէջ շատ մութ և սոսկալի քիչեր մը ցոյց կուտային:

Լօյքօ կը քալէր անդադար, շարունակեց Մաքար, գլուխը ծռած ու բազուկները կախած. գետեղերը հասնելով նստաւ քարի մը վրայ ու հառաչեց: Սիրտս կտոր կտոր եղաւ երբ լսեցի անոր հառաչանքը, բայց չմօտեցայ իրեն: Վիշտ մը չի կրնար սրբուիլ խօսքով, այնպէս չէ՞: Ասանկ անշարժ մնաց, ժամ մը, երկու ժամ, թերեւս երեք ժամ...

Իրմէ քիչ մը հեռու ես ալ երկնցած էի: Գիշերը պայծառ էր, լուսինը կը փութէր իր արծաթեայ լոյսը բոլոր դաշտագետինն վրայ: Հեռուէն լաւ մը կը տեսնուէր դաշտանկարը ամբողջ:

Յանկարծ տեսայ Ռատտան որ դուրս կ'ելլէր պահեցանայէն և կը մօտենար արագաքայլ: Ուրախութեամբ ողողուեցաւ սիրտս:

— Եւ սակայն, կը մտածէի, ի՞նչ յանդուգն աղջիկ է սա Ռատտան:

Հիմա բոլորովին մօտ էր անոր, բայց Սօպար զինքը չէր տեսներ:

Ռատտա կամաց մը դպաւ անոր ուսին, Լօյքօ դողդղաց, ձեռքերը երեսէն հեռացուց ու գլուխը վեր վերցուց: Տեսնելով զինքը, շտկուեցաւ ու դանակը ձեռքը առաւ:

— Աստուած իմ, մտածեցի, պիտի սպաննէ զանի:

Արդէն կ'երթայի, պիտի միջամտէի, երբոր Ռատտայի ձայնը լսեցի:

— Թո՛ղ դանակը, եթէ ոչ գլուխդ կը ջախջախեմ:

Ու տեսայ որ Ռատտա ձեռքը վեցհարուածեան մը ունէր զոր Սօպարի ճակտին ուղղած էր:

«Բռնուեցան երկուքը իրարու հետ, կը մտածէի, նայինք ո՛ւր պիտի յանգի վերջը»:

— Սպաննելու չէ որ եկած եմ, բարեկամ, այլ հաշտուելու. նեռէ՛ մէկդի դաշոյնդ, ըսաւ ու վեցհարուածեանը զետեղեց գօտիին մէջ:

Հնազանդեցաւ Սօպար ու պոստելով յօնքերը նայեցաւ անոր աչքերուն: Արտակարգ տեսարան: Երկուքն ալ ոտքի վրայ, իրարու կը նայէին ականապիչ, վայրի կենդանիներու նման: Երկուքն ալ նոյնքան բարեսիրտ՝ որքան արիասիրտ: Լուսինը կը դիտէր զանոնք երկնից բարձրութենէն: Ան ու ես միայն ականատեսն էինք այս սիրային տաամին:

— Մտիկ ըրէ ինձի, Լօյքօ, կը սիրեմ քեզի, ըսաւ Ռատտա:

Լօյքօ ուսերու շարժում մը միայն կրցաւ ընել, իբր թէ ձեռքերն ու ոտքերը կապուած ըլլային այդ պահուն:

— Բաւական արի տղաքներ տեսած եմ, բայց անոնց մէջ ամէնէն գեղեցիկն ու էն արիա-

սիրտը դուռն ես: Ամէնն ալ թերեւս անիլէին պետեմքին՝ հաւանութիւնս ստանալու համար: Բաւական էր որ ուզէի. ցուրտ կը վարուէի սակայն: Ամուսնութենէն ետքը փետտած հաւ մը պիտի դառնային բնականաբար: Հիմա ցիկաններու մէջ իրապէս արիասիրտ ու յանդուգն շատ քիչ մնացած է, թերեւս չկայ ալ ըսէի՝ եթէ քեզի չտեսնէի, Լօյքօս: Երբեք մէկը սիրած չեմ, երբէք, բայց քեզի սիրեցի: Եւ սակայն կը սիրեմ նաև աղջկան ազատութիւնս, ու ազատութեան սէրս քեզի համար ունեցածէս աւելի կը կշռէ: Առանց քեզի չպիտի կրնայի ապրիլ, ինչպէս դուռն չպիտի կրնայիր ապրիլ առանց ինծի: Ասոր համար է որ կը փափաքեմ որ դուռն հոգևով ու մարմնով իմա ըլլաս: Կը լսեմ, Լօյքօ:

Լօյքօ Ժպտեցաւ:

— Կը լսեմ, շարունակէ՛, սիրտս որքան կ'ուրախանայ լսելով այս բառերը, շարունակէ տակաւին:

— Ահաւասիկ ինչ որ ըսել կուզեմ քեզի, Լօյքօ, պարապ տեղը զիս յաղթելու միջոցներ մի՛ փնտոեր, պիտի յաղթուիս միշտ: Ու վերջապէս իմինս պիտի ըլլաս: Մի՛ կորսնցուներ ժամանակդ. անօգուտ տեղը: Համբոյրներս քեզի կըսպասեն... ու պիտի զրկեմ քեզի երկա՛ր, Լօյքօ: Համբոյրիս տակ պիտի մոռնաս քու յանդուգն ու սէգ կեանքդ: Երգերդ որ կ'ուրախացնեն հիմա արիասիրտ ցիկանները, չպիտի արձագանգեն այլեւս դաշտագետիկն լըրայ: Դուռն միայն Ռատտայիդ սիրազեղ ու քաղցրիկ երգերովը պիտի զբաղիս: Կը կրկնեմ, պարապ ժամանակ մի՛ կորսնցնէր: Վաղը համակերպէ ինծի իբր քու անդրանիկ ընկերովդ: Ու խոնարհէ մինչև ոտքերս ամբողջ պահրանային առջև ու համբուրէ աջ ձեռքս: Ահա ան ատեն քու կինդ պիտի ըլլամ:

Նմանօրինակ դէպք մը տեսած կամ լսած ես: Մամիկները կը պատմեն թէ հին ատենները, Գարատաղցիները այս սովորութիւնը ունին եղեր, բայց ցիկաններուն մէջ, բնաւ երբեք: Եղբայրանա՛լ երիտասարդ աղջկան մը հետ, ինչ ծաղրելի բան, գլուխդ ձաթեցնես ասանկ գիւտ մը անկարելի է ընել:

Լօյքօ ցատքեց ու վայրագ ճիչ մը արձակեց, իբր թէ չեշտակի կուրծքէն վերաւորուած ըլլար: Ռատտա կը դողդոջէր, բայց ինքզինքը կը բռնէր հաստատ:

— Ցտեսութիւն ուրեմն, վաղը պիտի ընես ինչ որ ըսի, կը լսեմ, Լօյքօ:

— Այո՛ կը լսեմ, շատ լաւ, պիտի ընեմ, հեծեծեց Սօպար:

Ռատտա ձեռքը երկնցուց անոր, բայց տղան երեսը չդարձուց, հովէն կոտրած ծառի մը նման տատանեցաւ ու ինկաւ դետինը, հեծկտալով ու խնդալով միանգամայն: Մեծ դժուարութեամբ խելքը գլուխը բերել տուի:

Ի՛նչ անտանելի է վշտակրիլը: Ո՞վ կրնայ ուրախանալ ցաւէն տրորող մարդկային սիրտի մը տրտունջը մտիկ ընելով:

Վերադարձայ պահրանային, ու պատմեցի ինչ որ տեսած էի: Բաւական խորհրդակցութենէ ետքը, որոշուեցաւ սպասել վախճանին:

* * *

Իրիկունը, կրակին շուրջը ամէնքնիս ալ հաւաքուած նստած էինք երբոր Լօյքօ եկաւ: Խոռվայոյզ էր, կարծես թէ նիհարցած էր անկէ ի վեր: Խոնարհեցուց մութ աչքերը ու ըսաւ առանց թարթիջները վեր վերցնելու:

— Ձեզի խօսելիք ունիմ, ընկերներ: Այս գիշեր սրտիս խորը չափեցի ու հոն այլևս ազատ կեանքիս տեղ մը չգտայ: Անիկայ միմիայն Ռատտային կը պատկանի այլևս: Հոն է ան, գեղեցիկն Ռատտա: Նայեցէք անոր, կը ժպտի հուրի մը պէս: Ռատտա կը սիրէ իր աղջկան ազատութիւնը իզմէ աւելի, բայց ես կը սիրեմ զինքը իմ ազատութենէս աւելի: Ու որոշեցի խոնարհիլ մինչև իր ոտքերը, աս է անոր հրամանն ու փափաքը, որպէս զի ամէն մարդ գիտնայ թէ մինչև ո՛ր աստիճան իր գեղեցկութիւնը գերած է արիասիրտ Լօյքօ Սօպարը որ մինչև հիմա խաղալիկ ըրած էր աղջիկները իր քմահաճոյքին, ինչպէս մեծ բազէ մը՝ էգ բազերը: Եթէ այսպէս համակերպիմ, խոստացաւ կինս ըլլալ, Պիտի ողողէ զիս համբոյրներով ու գգուանքներով, այնպէս որ այլևս չպիտի մտածեմ երգիս ու կորսուած ազատութեանս լըրայ: Այնպէս չէ՞, Ռատտա:

Աչքերը վերցուց և նայեցաւ անոր: Ռատտա գլուխը շարժեց լռիկ, խիստ կերպարանքով մը և ձեռքովը ցոյց տուաւ իր ոտքերը: Կը նայէինք միայն, առանց հասկնալու: Նախամեծար կը համարէինք չտեսնել Լօյքօ Սօպարը աղջկան մը ոտքը խոնարհած, այդ աղջիկը եթէ նոյնինքն Ռատտան ալ ըլլար: Կարեկցութեամբ լեցուած էինք ամէնքնիս ալ, արտուստ տխուր կը մտածէինք:

— Շա՛տ լաւ, դուչեց Ռատտա Սօպարին:

— Սի՛ր՝ աճապարեր, առջեւդ գեռ ատեն ունիս:

Սօպար կը խնդար սև խնդուքով մը:

— Գործը վերջացած է, ընկերներ, հիմա մինակ ինձի կը մնայ փորձել տեսնելու համար թէ Ռատտա ճշմարտապէս իր պնդածին չափ ուժեղ սիրտ մը ունի՞: Ամէնքնիդ ալ ներքեք ինձի, փոքրիկ եղբայրներս:

Հազիւ ժամանակ ունեցանք դուշակելու ինչ որ Սօպար ընել կուզէր, երբ Ռատտան տեսանք գետինը փռուած:

Կուրծքին մէջ արդէն մխուժ էր Սօպարի ծուռ դաշոյնը մինչև կոթը. ապաւնար կը մնայինք:

Ռատտա խեց դաշոյնը, մէկ կողմ նետեց ու վերքը իր սև մազերուն հիւսկէններովը դոցելով ըսաւ ժպտազին, որոշ ու բարձր ձայնով մը.

— Մնա՛ս բարով, Լօյքօ... դիտէի թէ ասանկ պիտի ընէիր...

Ու հոգին աւանդեց:

Հասկցա՞ր աղջիկ ըսուածը, արծուիկս, Աստուած անիծէ զիս՝ եթէ սուտ կը խօսիմ:

— Այո՛, պիտի խոնարհիմ մինչև ոտքերդ, իմ սէք հոգիս, պօռաց Լօյքօ ուժեղ ձայնով մը:

Ան ատեն գետին նետուելով, շրթունքները փակցուց մահացեալին ոտքերուն և մնաց արձանացած:

Ամէնքնիս ալ հանած էինք գլխարկնիս, ոտքի վրայ. սարսուռն մնացինք հոն. նմանօրինակ պարագայի մը մէջ դուն ըլլայիր ինչ կ'ընէիր:

Նաուր ըսաւ մեզի: — Կապենք զինքը:

Բայց ոչ ոք տեղէն շարժեցաւ, ու անկարող պիտի ըլլայինք շարժելու, այնքան

կը սիրէինք զինքը: Ծերունին Նաուր դիտէր ասիկա, ձեռքերը ձգեց ու հեռացաւ: Բայց Տանիլա գետնէն առաւ դաշոյնը դոր Ռատտա նետած էր ու երկար նայեցաւ անոր, քաշելով սպիտակ պելսերը:

Ծուռ ու սուր դաշոյնը կը կրէր տակաւին Ռատտայի չսառած արեան հեռքերը: Յանկարծ Տանիլա նետուեցաւ Սօպարի վրայ ու դաշոյնը մխեց անոր կոնակը, սրախն քովիկը. Գիտե՞ս, արծուիկս, որ Ռատտային հայրն էր այս ծերունին Տանիլա:

— Շատ լա՛ւ, ըսաւ Լօյքօ, դառնալով Տանիլային:

Ու գնաց միանալ Ռատտային:

Ռատտա փռուած էր, իր ձեռքը կը բռնէր մազերուն հիւսկէնները կուրծքին վրայ, բաց աչքերը կը նայէին կապոյտ երկինքին, ոտքերուն տակ կը պառկէր Լօյքօ Սօպար, մազերու հիւսքերը կ'իյնային երեսին վրայ որով կը ծածկուէր համակ:

Ծերունի Տանիլային պելսերը կը տատանէին ու թաւ յօնքերը կը պոստուէին: Լռակաց, կը նայէր երկինք, միջլդեռ ծերունին Նաուր՝ արագիլի պէս ճերմակ՝ կը պառկէր, երեսը գետինը ու կուլար այնքան որ իր ուսերը կը ցնցուէին ջղացնցումով մը:

Անշուշտ պիտի լային, արծուիկս:

Եթէ կը քալես, շարունակէ՛ միշտ ճամբադ, առանց շեղելու ո՛չ աջ և ո՛չ ձախ, Ուղիղ քալէ՛ կեանքիդ մէջ:

* *

Մաքար լռեց ու դնելով ծխամորճը քսակին մէջ, կուրծքը ծածկեց հագուստովը: Անձրեւը կը տեղար կաթիլ կաթիլ, հովը կը սաստկանար և ծովը կը մոնջէր խուլ ձայնով մը: Մէկիկ մէկիկ ձիւրը կը մօտենային կրակին որ կը մարէր յամբաբար, նայելով մեզի իրենց խոշոր իմաստուն աչքերովն, կը կենային անշարժ, չրջանակ մը կազմելով մեր շուրջը:

— Հօ՛փ, հօ՛փ, պօռաց Մաքար անոնց մտերմօրէն, ու ձեռքով իր սիրական ձիւն վիզը բռնելով՝ ըսաւ ինձի: — Պառկելու ատեն է...

Կրկնոցը գլուխը քաշելով, կորովի շար-

Ժուժով մը, փռուեցաւ գետին ու լռեց: Զէի կրնար քնանալ ես. նայուածքս կը թափանցէր դաշտին աղջամուղջին մէջ: Ոգեսպառ երազի մը նման կը տարածուէր աչքիս առջև գեղեցիկն Ռատտայի սէգ ու շքեղ դէմքը:

Զեռքովը անիկա կը սեղմէր մազին հիւսքերը կուրծքին վրայ, և նուրբ ու թխացած մատներուն մէջէն արիւնը կը հոսէր կաթիլ կաթիլ:

Անոր ետեւը կ'երեւար արիասիրտն Լօյքօ Սօպար. դէմքը ծածկուած էր սև խոպուպիքովը ու խոշոր սառ արցունքներ կ'իյնային աչքերէն:

Անձրեւը միշտ կը սաստկանար, ծովը կ'երգէր եղերերդ մը՝ Լօյքօ Սօպարի և ծերունի Տափլայի աղջկան ի պատիւ:

Գիշերուան աղջամղջային լռութեան մէջ երկու ցիկանները զիրար կը հալածէին շնոր հալիօրէն, բայց երբեք, հակառակ բոլոր իրենց ճիգերուն, Լօյքօ, գեղեցիկ երգիչը, չէր կրնար հասնիլ սէգ ու հրաշագեղն Ռատտայի:

ՄԱՔՍԻՄ ԿՕՐՔԻ

Թարգմ. ՇԱՀԱՐԻԿ

Վ Ե Ր Զ

ՀԻՒԱՆՂԱՆՈՅԻ ՇՈՒՐՋԸ

Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը իր երկուշաբթի օրուան նիստին մէջ, որ գումարուեցաւ Վսեմ. Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի ատենապետութեամբ, մասնաւորապէս զբաղեցաւ Հիւանդանոցի Գ. թեւին վերաշինութեան առթիւ այդ Հաստատութեան ճակատը դրուելիք արձանագրութեան խնդրովը, և այս մասին իր տեսութիւնները պարզող պաշտօնագիր մը ուղղեց Ս. Պատրիարք Նոր, Կեդր. Վարչութեան թողովով այդ արձանագրութեան նկատմամբ հարկ եղած վերջնական որոշումը տալ:

*** Հոգաբարձութեան ատենապետ Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան՝ իր ուղեւորութենէ վերադարձէն ի վեր առաջին անգամ ըլլալով շաբթուս սկիզբը այցելեց Հիւանդանոց որուն

բոլոր մասերն աչքէ անցուց և հրահանգներ տուաւ պաշտօնէութեան: Յետոյ, իր ողբացեալ տիկնոջ գերեզմանին վրայ պսակ մը դրաւ:

*** Ս. Պատրիարքը Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան տեղեկացուցած էր որ վերաշինութեան հաշիւները և յաւելեալ 548 ոսկիի գումարը Միքայէլ էֆ. Յակոբեանի կողմէ Պատրիարքարան յանձնուած են, և ըսած էր նաև որ վերաշինեալ յարկերուն վրայ նուիրատուներու անունները կրող արձանագրութիւններ գետեղուին: Հոգաբարձութիւնը գրով մը խնդրած է Ս. Պատրիարքէն որ այդ յաւելեալ գումարն յանձնելի իրեն, նոր շինուելիք յարկին յատկացուելու համար, և միւս կողմէ՝ եթէ գետեղուի արձանագրութեանց օրինակը կայ իրեն յանձնուին: Պատրաստեալ օրինակները, որոնց վրայ արձանագրուած են նուիրատուներու անունը և նուիրեալ գումարը, Պատրիարքարանէ զբաղեցան Հոգաբարձութեան:

*** Յառաջիկայ հինգշաբթի, 6 Մայիս, Համարձման տօնին առթիւ, Ս. Պատրիարքը հրաւիրուած է պատարագել Հիւանդանոցի մատրան մէջ:

ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԲՍՐԻԶԻ ՀՍՄՍԼՍՍՐԱՆԷՆ

Կը դարմանէ տղայոց հիւանդութիւնները (ներքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ականջի և կոկորդի գործողութիւններ:

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ Բերա, Մեծ—փոքր Գրէտի Լիոնէի քով, թիւ 331:

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12.

Արսոմաք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵՒԻՐ Օրագրի

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՐ

ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուեյարդարութիւնը եւ վաճառումն ալ տալու ի ֆթիմօրու լօ եւ ընկերութեան տան ապրանքներուն, ընկերութեան վաճառատունը կը գտնուի Սթամպոյ, Սուլթան Համամ, Ռազմէի վան իւան: Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Խընարզճի փողոցը գտնուող մթերանոցը: Վաճառքներն են մետաքսեղէն, թուիշ, բլիշ, բրդեղէն, բամբակեղէն, որք կանխիկ գնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ՝ արդի գիներուն բարձրացումէն առաջ եւ այնպիսի գիններով, զորս անկարելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին ալ տա հոս. պարտկի վրայ անմրցելի պայմաններով, Հասարակութիւնն եւ վաճառականը կը հրապարակին տեսնել ալ վաճառքներն եւ փոխառելի ներկայ անակնկալ առիթէն:

S O ୫ ୧. ୫. ୧ ୦ ୮ ୫ ୧ ୦ ୮

Մասնագետ փորհ հիւանդութեանց (ստոմախի, աղեւաց) ինչպէս նաեւ ւարդիտեան տխտերու:

Տօքթ. Է. Չուքլուս օր 17 տարիէ ի վեր
ի գործ կը դնէ իր արուեստը, վերջերս այ
ցելած է Եւրօպայի գլխաւոր հիւանդանոց
ները ուր մօտէն հետեւած է իր մասնագի-
տութիւնը կազմող հիւանդութեանց դարմա-
նումի նորագոյն մէթօաներուն: Կը դարմանէ
թէ՛ չտփահտաներու եւ թէ՛ աղօց ստամոքսի
եւ աղեաց հիւանդութիւնները: Գիմակաւ
տարրաւածու մ (որակական եւ քանակական)
եւ մանրադէտական քննութիւն ստամոքսային
հիւթերու: Կը բուժէ եղեկարականութեամբ
եւ մասսաժով Կլլ դարմանէ ջերմամիզու-
թիւն իրեն յատուկ դրութեամբ եւ դեղերով:
Հիւանդներ Կ'ը՛ղունի մին օր ժամ
9էն 12 եւ 2էն 5(Ը. Ե.), իր ընկարանին մէջ՝
Բերա, Տէրվիշ փողօց. Թէփէ—Պաշլի պար-
տէզին դէմ: Կ'ինքնու ինքնաւոր սպասման ու-
ղանքին սրահ: Ստամոքսի եւ աղեաց հի-
ւանդութիւններէ առուապող աղքատները
Կ'ընդունի չորեքշաբթի օրերը ժամ 9էն մին-
չեւ կէս օր:

4—24

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն ինչից բռնաբխիկ ապրանք

Մեծ—Շուկայ, Բիւրքէնեբուդ Դքան մօտ, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանոնց հաշիւար
հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլ-
թան—Համամ, Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ թահաֆրիէի
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-
տուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տոկունութիւն, եւ զիրարմատ-
չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան :

Աղամ վարդանեան մեծ պէս գոհ
թողուցած է իր բազմամիլ յաճախորդները:
Կ'ալ ժէ որ Շուկայ ելլող մօէն ընտանիք
այցելէ անգամ մը ալս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

4 4 0 3 6 0 1

1. ԻՅՆԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԼԷ

to

ՊԱՇԵՆԻՆԵ ԺԸՆԵՒԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՋԱՐԱՆԷՆ

Կը բուսէ ազառի մէջն տեսնից ցաւեր
 և լինաեբու հիւանդութիւններ, կտառեբու-
 քորեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի
 մէջն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՕ-
 նէի դիմացը Կլավանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ
ցորեկ աղքատաց ակումբ քաշելը ձրի է:

4 - 36

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

ΦΥΣΙΚΑ

Վկայեալ Բարիգի Իրաւագիտական վարժարանէն: Հաստատուած է Ղալաթիւ,
Մէհմէտ Ալի փաշա խան, Թիւ 35:

Կըստանձէ պաշտպանութիւնը մօէն ահապ զատերու՝ օսմանեան եւ օտար մօէն կարգի զատարաններու արջի :



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԵՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԻՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազով արտոնուած

Կեդրոնատեղին Քեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԵՆՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌ-ԲՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ- ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՎ- րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԲՐՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ քուսկի հիւղեր

VICTORIA
DE
BERLIN

ՎԻԲՐՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ ունի վճարումները չաթաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 զրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 2րդին ար-
խայակ գն հռովարեակալ եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէն:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Ծրմ. Կայս Պանքա
եւ Քրետի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՄԻՆԷՄ ԳԱԼՏԱՅԵԱՆ

Տեսուչ

ՏԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Պոլիս Քաթրոնքոլլու խան

բիւ. 45 հւ 45 Կ.

ՏՕՔԹ. Ժ. ԿԱԼԷՊ

Մասնագետ միզանցքային հիւանդու-
թեանց, վկայեալ վիէննայի բժշկական Հա-
մալորառնէն եւ Բարիզի ու Պէրլինի հիւան-
դանոցներուն մէջ գործնական փորձեր կա-
տարած, Կը դարձանէ իրեն զիմող հիւանդ-
ները՝ զիտական նորադոյն մէթաւներու հա-
մաձայն: Հասցէ՝ Բերա, Թիւնէլի Բաւաթին
դէմ, Եէմէնիճի փողոց Թ. 31.

5-12

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ. ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200


Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

ԳԵ. ՆԵ. ՆՐ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան Ժ. 11½

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11½

Նիրակի օրերը յամագորութեամբ



Սնկարիկի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհի դիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու սափի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը զանուից:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ:

ՇԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍ.Լ.Ս.Թ.Ս.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿՈՒՏԱՐ

Չարլը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարեալ երաւիաւորութիւն:

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կողմէ վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը, կա-
մուրջին դէմի առկիւնը, իր դարմանատան
մէջ, ամէն օր կէտօրէն մինչեւ իրիկուան: Իսկ
Բերա, Թաքսիմ, Ֆրամսկայան հիւանդանոցին
դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ
իրիկուան ժամ 6 էն 9 (Ը. Ե.):